

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

***Ի գիտությունն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների***

Պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու նպատակով սույն թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 15-ը /ներառյալ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունում կազմակերպվում է փաստաթղթերի ընդունելություն:

Ցանկացողները դիմում – հայտի հետ միասին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա/ ավարտական փաստաթղթի /դիպլոմի/ և ներդիրի /միջուկի/ բնօրինակները՝ պատճենների հետ միասին,

բ/ անձը հաստատող փաստաթղթի /անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, ԼՂՀ հատուկ անձնագիր, կացության վկայական/ բնօրինակները՝ պատճենների հետ միասին,

գ/ 2 լուսանկար /3x4սմ չափսի/:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր /բացի շաբաթ և կիրակի օրերից/՝ ժամը 10<sup>00</sup>-17<sup>00</sup>, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնում /14 սենյակ/ :

Տեղեկությունների համար գանգահարել /047/ 94-11-39: